2-րդ ԴԱՍԱՐԱՆ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ԹԵՄԱ 4– ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏ

Անհրաժեշտ նյութեր

© Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան

ԹԵՄԱ 4 –ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏ

ԴԱՍ 2 – ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անհրաժեշտ պարագաներ

Քարտեր

օգնել միմյանց	**սիրել և հարգել ընկերներին**	**ընկերներս սիրեն ու հարգեն ինձ**
ընկերներին չվիրավորել	**մաքուր դասասենյակ ունենալ**	**թղթերն աղբի զամբյուղը գցել**
մաքուր օդ շնչել	**օդափոխել դասասենյակը**	**գեղեցիկ դասասենյակ ունենալ**
խնամքով վերավերվել կահույքին	**ծաղիկներ ունենալ դասասենյակում**	**ջրել, խնամել ծաղիկները**
գրատախտակը մաքրել	**դասի ժամանակ չաղմկել**	**լսել ընկերներին**
կարծիք արտահայտել	**ընկերները լսեն, երբ խոսում եմ**	**չընդհատել իրար**

հերթի սպասել	**բուֆետից օգտվել**	**հերթապահություն սահմանել**
ապահով զգալ դպրոցում	**աղբը լուսամուտից չթափել**	**Ծառատունկի,շաբաթօրյակի մասնակցել, մաքուր կանաչ շրջապատ ունենալ**

ԴԱՍ 3 – ԹՈՒՅԼ ՉՏԱՆՔ

Անհրաժեշտ պարագաներ

1. **«Կամակոր իշուկները» (կտրտելու համար համար)**



2. **«Պատմություններ»**

1.Անին օդապարուկ էր նվեր ստացել: Ուրախ-ուրախ իջավ բակ, որ ընկերների հետ թռցնեն:

- Շո՛ւտ եմ ասել՝ առաջինը ե՛ս եմ թռցնելու,- բաղավեց Տիգրանը ու Անիի ձեռքից թռցրեց օդապարուկը:
- Դու ձևը չգիտե՛ս, թող ցույց տամ,- ասաց Գրիգորը և փորձեց օդապարուկը խլել Տիգրանից:
- Քեզ ո՞վ ասաց,- վրդովվեց Տիգրանը՝ օդապարուկը ձեռքից բաց չթողնելով:

Շարունակելով վիճել՝ տղաները այնքան ձեռքից-ձեռք քաշքշեցին օդապարուկը, մինչև պարանը կտրվեց: Օդապարուկը վեր բարձրացաց ու անհետացավ կապույտ երկնքում: Բոլորը մնացին շվարած կանգնած:

2. Մի օր երեխաները ծառի տակ նստած հեքիաթ էին կարդում.

«Մի գյուղացի անտառի բացատում որոշում է գազար ցանել: Մեկ էլ անտառից մի արջ է դուրս գալիս, գյուղացուն տեսնում է ու հարցնում, թե՝ կարելի է ինքն էլ օգնի, վերջում էլ բերքը հավասար կիսեն: Գյուղացին ասում է, «Շատ բարի: Թե ինձ հետ հավասար աշխատես, ցողունները՝ քեզ, արմատները՝ ինձ»:

Միամիտ արջը համաձայնվում է, սկսում են աշխատել: Արջը բացատի կոճղերն է հավաքում, հողը փորում է, իսկ գյուղացին սերմն է ցանում: Գալիս է բերքը հավաքելու ժամանակը: Խորամանկ գյուղացին, ասածի պես, հյութեղ գազարներն իրեն է պահում , իսկ անպետք ցողունները տալիս է արջին: արջը հասկանում է, որ իրեն խաբել են, բայց ինչ կարող էր անել: Քոռ-փոշման վերադառնում է անտառ»:

- **Խեղճ արջ,- վրդովված բացականչեցին երեխաները և որոշեցին այս հեքիաթի համար ավելի արդարացի վերջաբան հորինեն:**

3. Բակի հեռավոր անկյունում մի ազատ տարածք կար: Հայրիկները որոշեցին ավտոտնակներ կառուցել: Մայրիկները, այս բանը տեսնելով, ըմբոստացան. նրանք կարծում էին, որ այդ տարածքը շատ հարմար է լվացքի պարաններ ամրացնելու համար: Վեճ սկսվեց: Ոչ ոք չէր ուզում դիրքերը զիջել: Վեճի թեժ պահին, մեկ էլ նկատեցին, որ, երեխաները միասին համերաշխ աշխատելով, արդեն քարերից մաքրել ու կարգի էին բերել տարածքը: Բոլորը հասկացան, որ ամենաճիշտն այդտեղ խաղահրապարակ կառուցելն էր: Այս լուծումն ուրախացրեց բոլորին, այլևս չէին անհանգստանա, թե երեխաներն ազատ ժամանակ ինչպես են անցկացնում, բացի այդ, բակը կբարեկարգվի, կկանաչապատվի, փոշին էլ քիչ կլինի:

ԴԱՍ 4 – ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

1. Բարեկիրթ կանոնների ցանկ

Կոնֆետի թուղթը գետնին մի գցիր,	**բարեկամներին, ուսուցիչներին, ընկերներին**:
Երբեք մի ընդհատիր	**անքաղաքավարի բառեր:**
Միշտ բարևիր հարևանիդ,	**բարձր ձայնով:**
Դասարան մտնելիս, զիջիր	**ուշադիր, համբերատար լսիր զրուցակցիդ:**
Երբեք մի խոսիր	**քեզ որևէ բան պատմողին:**
Քո խոսքը ասելուց առաջ	**այլ նետիր աղբամանը:**
Հարկ եղած դեպքում	**ծերերին, փոքրերին:**
Հաճախ օգտագործիր	**մի խուսափիր ասել՝ շնորհակալություն:**
Միշտ օգնիր	**Քաղաքավարի բառեր՝խնդրեմ, շնորհակալություն, ներողություն:**
Երբեք մի օգտագործիր	**ուսուցչիդ, դասընկերոջդ:**

2. Իրավիճակային քարտեր

1. Ուզում ես՝ քեզ էլ բաժին տա՞մ: Էլ ի՞նչ կուզեիր:
2. Ես քեզանից ուժեղ եմ, հիմար, շատ խոսես՝ կապտակեմ:
3. Հետո՞ ինչ, որ «9» ես ստացել: Կարծում ես՝ամենագետ ես,հա՞: Թիթի՛զ:
4. Հիմար տեսք ունես: Ի՞նչ ես քեզ երևակայում:
5. Քեզ ո՞վ թողեց առանց հարցնելու գրիչս վերցնես:Գողի՛ մեկը:
6. Ուզո՞ւմ ես կռիվ անել: Լա՛վ: Գնամ եղբորս կանչեմ՝ կտեսնես:
7. Չգոռա՛ս ինձ վրա: Ձայնդ կտրի՛ր, ապուշ: Կորի՛ր այստեղից
8. Դու չես կարող մեզ հետ խաղալ, դու ոչինչ չես կարողանում անել: Հիմա՛ր:
9. Սրան տեսեք, մազերը՝ բիզ-բիզ, ինքը՝ ակնոցով: